



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ ԸԻԴ 1483/02/14թ.  
Նախագահող դատավոր՝ Ն. Գրիգորյան  
Դատավորներ՝  
    Հ. Գրիգորյան  
    Կ. Սադյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ 1483/02/14թ.

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

4-ին օգոստոսի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)  
վճռաբեկության կարգով՝  
նախագահությամբ՝ դատավոր                    Ա. Հայրապետյանի  
   դատավորներ՝                    Գ. Գրիգորյանի  
                      Ա. Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Էդուարդ Գրիգորիի Բուդաղյանի ընդդեմ Հենրիխ Գեորգիի Վանյանի, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի, ԼՂՀ արդարադատության նախարարության Մարտակերտ նոտարական տարածքի պետնոտարի և ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ հողամասի վարձակալության պայմանագիրն ու դրա հիման վրա կատարած վարձակալության իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի հունիսի 12-ի որոշման դեմ պատասխանող Հ. Վանյանի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան Է. Բուդաղյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ խնդրել է անվավեր ճանաչել Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի ղեկավարի և

Հ.Վանյանի /այսուհետ՝ նաև Պատասխանող/ միջև կնքված վարձակալության թիվ 6 պայմանագիրը՝ 240.000 քառ. մետր տարածքով հողամասը վարձակալության տրամադրելու մասին և ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի /այսուհետ՝ նաև ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ/ Մարտակերտի տարածքային ստորաբաժանման կողմից 2003թ. մայիսի 15-ի վարձակալության իրավունքի պետական գրանցումները, որոնց հիման վրա տրվել են թիվ 001691, 001692 վարձակալության իրավունքի գրանցման վկայականները:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը 2015թ. մարտի 31-ի վճռով հայցը բավարարել է:

Պատասխանողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Դատարանի վճիռը, Վերաքննիչ դատարանը 2015թ. հունիսի 12-ի որոշմամբ Դատարանի վճիռը բեկանել է և փոփոխել: Է.Բուդաղյանի հայցը բավարարել է մասնակիորեն. ԼՂՀ Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա համայնքի ղեկավարի և Հ.Վանյանի միջև 2003թ. ապրիլի 14-ին կնքված և ԼՂՀ արդարադատության նախարարության Մարտակերտ նոտարական տարածքի պետնոտարի կողմից 2003թ. ապրիլի 29-ին վավերացված գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության մասին թիվ 06 պայմանագիրն ու դրա հիման վրա ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ Մարտակերտի տարածքային ստորաբաժանման կողմից 2003թ. մայիսի 17-ին թիվ 007033 և թիվ 007034 համարների ներքո կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումները՝ ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-1 մատյանի 130712 համարի տակ 2008թ. հոկտեմբերի 13-ին կատարված 4.60 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի վերաբերյալ Է.Բուդաղյանի և երրորդ անձանց անվամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի գրանցումն /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 106139 վկայական/ ընդգրկող հատվածների մասով, ճանաչել է անվավեր:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայցվորը:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերողի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 47-րդ, 49-րդ հոդվածների պահանջները, չի կիրառել կիրառման ենթակա ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 15-րդ, 305-րդ հոդվածները, ինչը հանգեցրել է գործի ըստ էության սխալ լուծման:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորում է հետևյալ պատճառարանությամբ.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է համայնքի ղեկավարի և կադաստրի ստորաբաժանման ղեկավարի հայտարարությունները, մինչդեռ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 47-րդ և 57-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, պետք է գործով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակվեր փորձաքննություն՝ հողամասերի տեղադրությունը, զբաղեցրած կամ վերածածկված մասերի առկայությունը պարզելու համար:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը ապացուցման բեռը կրող կողմից կամ համայնքից չի պահանջել ենթադրյալ սեփականաշնորհման ժամանակ անցկացված վիճակահանության արդյունքներով կազմված փաստաթղթերը, ինչը պետք է հիմք հանդիսանար արդարացի և հիմնավորված որոշման համար:

Բողոքաբերը պնդում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործով առկա ապացույցները, ինչի հետևանքով խախտել է նյութական և դատավարական նորմերը և արդյունքում կայացրել է սխալ և բեկանման ենթակա դատական ակտ:

Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել 1998թ. հոկտեմբերի 3-ի թիվ 2 արձանագրությունը և դրա հիման վրա տրված հողի ժամանակավոր սեփականության վկայականը, սակայն գործում նշված արձանագրությունն առկա չէ: Վերաքննիչ դատարանն՝ ըստ բողոք բերողի, հաշվի չի առել և քննարկման առարկա չի դարձրել գործում առկա ԸԻԴ 0815/02/2012թ. գործով Վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը, ԸԻԴ 0181/05/2014թ. վարչական գործում առաջադրած փաստարկները: Բողոքաբերը պնդում է, որ սույն գործի վարույթը ենթակա էր կասեցման՝ մինչև վարչական գործով դատաքննության ավարտը: Դատարանը սխալ հետևության է հանգել Պատասխանողի և համայնքի միջև կնքված պայմանագրերի և դրանց հիման վրա կատարված պետական գրանցումները հավաստող վկայականների մասով և անհիմն է անվավեր ճանաչել պետական գրանցումը, այն մասով, որի վերաբերյալ պահանջ չի եղել, այսինքն՝ գործով վիճարկվող և Հայցվորի կողմից ապօրինի տիրապետվող հողամասն ընդգրկված է Պատասխանողի անվամբ տրամադրված թիվ 001692 վկայականում նշված և թիվ 007033 պետական գրանցման համարը կրող հողամասում, մինչդեռ Վերաքննիչ դատարանը մյուս 12 հա նկատմամբ թիվ 007034 պետական գրանցման համարը կրող հողամասի նկատմամբ իրավունքը ևս անվավեր է ճանաչել:

Բողոքաբերը գտնում է, որ ստորադաս դատարանի որոշումը հիմնված չէ գործի նյութերի վրա, դատական ակտը պատճառաբանված և օրինական չէ, քանի որ դատարանը սույն գործով չի իրականացրել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչի հետևանքով գործով չեն պարզվել մի շարք կարևոր հանգամանքներ, այն է՝ հողամասերի տեղադրության և Հայցվորի սեփականաշնորհման սուբյեկտ հանդիսանալու, ինչպես նաև վարձակալության

պայմանագիրը և դրա հիման վրա կատարված գրանցումը վիճարկելու իրավասությամբ օժտված լինելու հանգամանքները:

Բողոք բերողը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և փոփոխել այն, կայացնելով նոր դատական ակտ՝ հայցն ամբողջությամբ մերժելու մասին կամ բեկանել բողոքարկվող որոշումը, գործն ուղարկելով Դատարան՝ նոր քննության, սահմանելով նոր քննության ծավալները:

### **3. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Վճռաբեկ բողոքի պատասխանում Հայցվորը պատճառաբանել է, որ բողոքաբերի կողմից ներկայացված իրավական հիմնավորումները և պնդումներն ակնհայտ անհիմն են, ինչը հաստատվում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ, ուստի և խնդրել է մերժել վճռաբեկ բողոքը:

### **4. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

1. Սույն գործով դատաքննությունը Դատարանում իրականացվել է դատավոր Ս.Գրիգորյանի նախագահությամբ:

2. Վերաքննիչ դատարանի 2015թ. հունիսի 12-ի դատական նիստը նախագահում էր դատավոր Ն.Գրիգորյանը, մասնակցությամբ դատավորներ Հ.Գրիգորյանի և Կ.Սաղյանի:

3. Դատավորներ Ս.Գրիգորյանը և Ն.Գրիգորյանը հանդիսանում են հարազատ եղբայրների որդիներ, այսինքն՝ մինչև 3-րդ աստիճանի ազգակցական կապ ունեցող ազգականներ:

4. Վերաքննիչ դատարանում գործով նախագահող դատավոր Ն.Գրիգորյանը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված հիմքի առկայության պայմաններում, ինքնաբացարկի միջնորդություն չի ներկայացրել:

### **5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի բողոքարկված դատական ակտի վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք Գերագույն դատարանը կարող է կիրառել դատական ակտը բեկանելու լիազորությունը, եթե առկա է դատական ակտն անվերապահ բեկանելու, սակայն

վճռաբեկ բողոքում չնշված հիմքը, դրանով իսկ դուրս գալով վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1. դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով.

2. դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին.

3. վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն.

4. վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.

5. գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Վճռի անվերապահ բեկանման հիմքերի վերոնշյալ ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը քննարկվող հոդվածում առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, անկախ այն հանգամանքից, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի ըստ էության սխալ լուծման, թե՛ ոչ: Այդպիսի խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր և պետք է գնահատվի որպես թույլ տրված էական խախտման հետևանք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանված են ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել:...

ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, երբ՝....3/ դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ միջև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա /հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա/ գործին մասնակցող անձ

կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին աստիճանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ: Նույն օրենքի իմաստով անձի հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները: Անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Անձի հետ արյունակցական կապի մինչև 3-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, որը, ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ 2-րդ մասում և 241-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված խախտումները վերաբերում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ԼՂՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված արդարադատության սկզբունքներին, այն է՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարան, դատարանի օրինական կազմ, լսված լինելու իրավունք, դատավարության լեզու և այլն: Հետևաբար նշված հիմքերի առկայությունը կասկածի տակ է դնում ընդհանրապես արդարադատություն իրականացված լինելու կամ արդարադատությունը դատարանի կողմից իրականացված լինելու իրողությունը:

Վերը նշված իրավանորմերի փոխկապակցված վերլուծության արդյունքում, Գերագույն դատարանը գտնում է, որ վերադաս դատարանի կողմից նման խախտումների արձանագրումը ipso facto հանգեցնում է վերանայվող դատական ակտի բեկանմանը՝ անկախ բողոքում բարձրացրած նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման կամ չկիրառման վերաբերյալ հիմքերի հիմնավոր լինելուց:

Մույն գործի փաստերի համաձայն՝ գործով դատաքննությունը Դատարանում իրականացվել է դատավոր Ս.Գրիգորյանի նախագահությամբ: Վերաքննիչ դատարանի 2015թ. հունիսի 12-ի դատական նիստը նախագահում էր դատավոր Ն.Գրիգորյանը, մասնակցությամբ դատավորներ Հ.Գրիգորյանի և Կ.Սաղյանի: Դատավոր Ն.Գրիգորյանը, հանդիսանալով դատավոր Ս.Գրիգորյանի մինչև 3-րդ աստիճանի ազգակիցը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտավոր էր ներկայացնել ինքնաբացարկի միջնորդություն, ինչը դատավորի կողմից չի իրականացվել, ինչն՝ ըստ Գերագույն դատարանի, հանդիսանում է վերը նշված օրենքների պահանջների խախտում: Դատավորի կողմից թույլ է տրվել նշված օրենքների պահանջների խախտում, ինչը ԼՂՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն հանդիսանում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասով, նաև նույն օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված խախտումների բնույթն այնպիսինն է, որ դրանք կարող են վերացվել բացառապես դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով, իսկ սույն գործով՝ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում նոր քննություն իրականացնելուց հետո: Նշված պատճառաբանությամբ, Գերագույն դատարանի կողմից բողոքարկվող որոշման անվերապահ բեկանման որևէ հիմքի առկայությունը հաստատված լինելու դեպքում, կիրառման է ենթակա դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ բողոքարկվող որոշումը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ինչ վերաբերում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքի փաստարկներին, ապա վճռի անվերապահ բեկանման հիմքի առկայության պայմաններում, վերը նշված պատճառաբանություններով, Գերագույն դատարանը հնարավոր չի համարում դրանց անդրադառնալ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1.Պատասխանող Հենրիխ Վանյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. հունիսի 12-ի որոշումը՝ քաղաքացիական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**